



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶ
ՎԱՆԱԶՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

« 28 » հոկտեմբերի 2011թ. **ՈՐՈՇՈՒՄ** թիվ 59-Ն

**ՎԱՆԱԶՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, ղեկավարվելով «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով՝
Վանաձորի համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Հաստատել Վանաձորի համայնքի 2012 թվականի բյուջեն՝

1.1. Եկամուտների գծով - 2107941.6 հազ.դրամ

այդ թվում՝

* վարչական բյուջեի մասով - 1859471.6 հազ.դրամ,

* ֆոնդային բյուջեի մասով - 248470.0 հազ.դրամ:

1.2. Ծախսերի գծով - 2107941.6 հազ.դրամ

այդ թվում՝

* վարչական բյուջեի մասով - 1859471.6 հազ.դրամ,

* ֆոնդային բյուջեի մասով - 248470.0 հազ.դրամ:

2. Հաստատել Վանաձորի համայնքի 2012թ. բյուջեի եկամուտներն ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հավելված թիվ 1-ի:

3. Հաստատել Վանաձորի համայնքի 2012թ. բյուջեից հատկացումներն ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման՝ համաձայն հավելված թիվ 2-ի:









4. Հաստատել սույն որոշման 3-րդ կետով սահմանված բյուջետային հատկացումների հաշվին ֆինանսավորվող ծախսատեսակներն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հավելված թիվ 3-ի:

5. Հաստատել սույն որոշման 3-րդ և 4-րդ կետերով սահմանված բյուջետային հատկացումների հաշվին ֆինանսավորվող ծախսերն ըստ առանձին խմբերի՝ համաձայն հավելված թիվ 8-ի:

6. «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն թույլատրել համայնքի ղեկավարին 2012 թվականին անհրաժեշտության դեպքում, սույն որոշման 1-ին կետով հաստատված հատկացումների ընդհանուր գումարի 3 տոկոսի սահմաններում վերաբաշխել դրանք:

7. Համայնքի 2012 թվականի բյուջեի կատարման ընթացքում պաշտպանվածության են ենթակա և լրիվ ծավալով ֆինանսավորվում են՝

- ա) աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումները.
- բ) պարտադիր սոցիալական ապահովության վճարները.
- գ) սանմաքրումը, աղբահանությունը.
- դ) մշակութային և սպորտային միջոցառումները:

ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՅ
Քաղաքապետի 	Ա. Հախինյան 	-----
Պատվարի 	Հ. Հովսեփյան 	-----
Մշակույթի 	Ա. Գինոսյան 	-----
Ազգային 	Ս. Գիլոյան 	-----




Ա. ԳԻՆՈՍՅԱՆ
28.10.2011թ.
ք. Վանաձոր